



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 221-Ա/2

« 13 » մարտի 2018թ.

**«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ - 2018» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 14-րդ կետի «դ» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2018» մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Մրցույթի արդյունքների հաստատման և գիտական թեմաների ցանկերում փոփոխությունների կատարման լիազորությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2018» **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ մինչև 2018 թվականի ապրիլի 16-ը:

Մրցույթի հրավերի փաթեթը գտնվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական ծրագրերի իրականացման աջակցության բաժնում՝ աշխատանքային օրերին ժամը 14:00 - 17:00 (հեռախոսներ՝ 21-01-40 (*113), 21-01-40 (*116)):

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարության գիտության պետական կոմիտե

ՀՐԱՎԵՐ

«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2018» ՄՐԳՈՒՅԹԻ

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների (այսուհետ՝ Թեմա) հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2018» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 13-ի N 221-Ա/2 հրամանի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտության բոլոր բնագավառների մասնագիտություններով (Հավելված N 2.1) գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար մրցութային կարգով կտրամադրի հետևյալ դրամաշնորհները.

- մինչև 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ 12-ամսյա անհատական աջակցություն՝ պետական պատվերով առկա (բացի ուսուցման երրորդ տարվա) և հեռակա ուսուցման ասպիրանտներին,

- մինչև 1 125 000 (մեկ միլիոն մեկ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ 9-ամսյա անհատական աջակցություն՝ պետական պատվերով առկա ուսուցման երրորդ տարվա ասպիրանտներին:

3. Մրցույթին մասնակցող ասպիրանտը պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչ և Թեմայի իրականացման ընթացքում բնակվի Հայաստանի Հանրապետությունում:

4. Մրցույթին չեն կարող մասնակցել.

- Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) Թեմաների (ծրագրերի) կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե այդ Թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված Թեմաների ֆինանսավորման սկիզբը,

- «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2016» շրջանակներում իրականացվող գիտական թեմաների կատարողները:

5. Հայտը ներկայացնել գիտական թեմայի տեսքով՝ Հավելված N 2.2-ի ձևերին համապատասխան, հայերեն և անգլերեն՝ մեկական տպագիր և էլեկտրոնային (խտասկավառակ) տարբերակներով:

6. Հայտի տպագիր տարբերակները ներկայացնել A4 ձևաչափի թղթի վրա տպված, 1,5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով («Sylfaen»՝ հայերեն և «Times New Roman»՝ անգլերեն տեքստերի համար)՝ պահպանելով Հայտի ձևերում առկա աղյուսակների ամբողջականությունը, էջերի բոլոր կողմերից թողնել 2,5 սմ լուսանցք և հաջորդաբար համարակալել ներքևի աջ անկյունում: Հայտի էլեկտրոնային տարբերակը ներկայացնել մեկ ամբողջական «MS Word» ձևաչափի ֆայլով:

7. Հայտի հայերեն տարբերակում ասպիրանտի ստորագրությունը պետք է լինի գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությամբ հաստատված և Կազմակերպության կնիքով վավերացված:

8. Ծախսերի նախահաշվի (այսուհետ՝ Նախահաշիվ) «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել 100,0 հազար ՀՀ դրամ:

9. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել հետազոտական սարքավորումների և գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման ծախսեր:

10. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա պետություններում գիտական միջոցառումներին մասնակցելու համար:

11. Նախահաշվի բոլոր կետերը մեկնաբանել և հիմնավորել:

12. Հայտին կից՝ Կոմիտե ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- ասպիրանտի դիմումը (Հավելված N 2.3),

- Կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի դրական կամ բացասական եզրակացությունը,

- ասպիրանտ հանդիսանալու մասին տեղեկանք, որտեղ նշված է ուսուցման ձևը (առկա կամ հեռակա) և տարին,

- ասպիրանտի գիտական թեզի ղեկավարի տվյալները (Հավելված N 2.4):

13. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե ներկայացնել առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22):

14. Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018 թվականի ապրիլի 16-ը:

15. Հայտը չի քննարկվում, եթե՝

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,

- լրացված է ոչ ամբողջությամբ:

16. Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերը տրամադրվում են վերջիններիս գնահատման նպատակով ստեղծված հանձնաժողովին (այսուհետև՝ Հանձնաժողով)՝ Կոմիտեի փորձագետների շտեմարանում ընդգրկված փորձագետների ներգրավմամբ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

17. Գիտական փորձաքննության ժամանակ Հանձնաժողովը գնահատում է Թեմայի գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, վերլուծում Թեմայի իրականացման նախադրյալները, ծավալը, իրականացման ժամկետները, ֆինանսական արդյունավետությունը, ինչպես նաև գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

18. Հանձնաժողովի կողմից տրվում է առաջարկություն՝ Թեմայի ֆինանսավորման ծավալի վերաբերյալ:

19. Հանձնաժողովը Հայտերի հաստատման նպատակահարմարության վերաբերյալ եզրակացությունները ներկայացնում է Կոմիտե՝ Հայտերի վերջնական ընտրության համար:

20. Կոմիտեն գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի/մասնագիտության համար, Հայտերի գնահատականների նվազման կարգով, ձևավորում է վարկանիշային ցանկ:

21. Կոմիտեի նախագահը, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման համար հատկացումների չափից, հաստատում է ֆինանսավորման երաշխավորվող Թեմաների ցանկը, հեղինակների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող՝ Հանձնաժողովի առաջարկած ֆինանսավորման ծավալը:

22. Կոմիտեն Կազմակերպությունների ղեկավարներին տրամադրում է տվյալ Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, հեղինակների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

23. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Թեմայի հեղինակի միջև ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր:

24. Մրցույթի արդյունքների բողոքարկում նախատեսված չէ:

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ**

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1.1. Մաթեմատիկա
- 1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ
- 1.3. Ֆիզիկա և աստղագիտություն
- 1.4. Քիմիա
- 1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ
- 1.6. Կենսաբանական գիտություններ
- 1.7. Այլ բնական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

- 2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն
- 2.2. Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ
- 2.3. Մեխանիկա
- 2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն
- 2.5. Քիմիական տեխնոլոգիաներ
- 2.6. Նյութագիտություն
- 2.7. Բժշկական սարքաշինություն
- 2.8. Էկոլոգիա
- 2.9. Կենսատեխնոլոգիա
- 2.10. Նանոտեխնոլոգիա
- 2.11. Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 3.1. Ընդհանուր բժշկություն
- 3.2. Կլինիկական բժշկություն
- 3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա
- 3.4. Այլ բժշկական գիտություններ

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն
- 4.2. Բուսաբուծություն
- 4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
- 4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
- 4.5. Այլ գյուղատնտեսական գիտություններ

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 5.1. Հոգեբանություն
- 5.2. Տնտեսագիտություն և գործարարություն
- 5.3. Մանկավարժական գիտություններ
- 5.4. Սոցիոլոգիա
- 5.5. Իրավունք
- 5.6. Քաղաքական գիտություններ
- 5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
- 5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
- 5.9. Այլ հասարակական գիտություններ

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 6.1. Պատմություն, հնագիտություն
- 6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն
- 6.3. Փիլիսոփայություն, էթիկա
- 6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն
- 6.5. Արվեստագիտություն
- 6.6. Այլ հումանիտար գիտություններ

THE FIELD AND SPECIALTIES OF SCIENTIFIC AND SCIENTIFIC - TECHNICAL ACTIVITY

1. NATURAL SCIENCES

- 1.1. Mathematics
- 1.2. Informatics and Computer sciences
- 1.3. Physics and Astronomy
- 1.4. Chemistry
- 1.5. Earth and Related Environmental Sciences
- 1.6. Biological Sciences
- 1.7. Other natural sciences

2. ENGINEERING AND TECHNOLOGY

- 2.1. Civil Engineering and Architecture
- 2.2. Electrical Engineering, Electronics, Energy, Computer and Information Technology
- 2.3. Mechanics
- 2.4. Science of Machines and Mechanical Engineering
- 2.5. Chemical Engineering
- 2.6. Materials Engineering
- 2.7. Medical Engineering
- 2.8. Ecology
- 2.9. Biotechnology
- 2.10. Nanotechnology
- 2.11. Other Engineering and Technologies

3. MEDICAL SCIENCES

- 3.1. Basic Medical Sciences
- 3.2. Clinical Medicine
- 3.3. Medical Biotechnology
- 3.4. Other Medical Sciences

4. AGRICULTURAL SCIENCES

- 4.1. Animal Husbandry and Veterinary Sciences

- 4.2. Plant Breeding
- 4.3. Soil Science, Agro chemistry, Plant Protection
- 4.4. Agricultural Biotechnologies
- 4.5. Other Agricultural Sciences

5. SOCIAL SCIENCES

- 5.1. Psychology
- 5.2. Economics and Business
- 5.3. Pedagogical Sciences
- 5.4. Sociology
- 5.5. Law
- 5.6. Political Sciences
- 5.7. Social and Economic Geography
- 5.8. Mass Media and Communications
- 5.9. Other Social Sciences

6. ARMENOLOGY AND THE HUMANITIES

- 6.1. History, Archeology
- 6.2. Linguistics and Literal Studies
- 6.3. Philosophy, Ethics
- 6.4. Theology; Religious Studies
- 6.5. Arts
- 6.6. Other Humanities

ՀԱՅՏ

**«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ - 2018» ՄՐՑՈՒՅԹԻ**

Հայտը հանձնված է «_____» _____ 2018 թ. Ծածկագիր՝ _____
(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

Ձև 1

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

1. Հայտի

- վերնագիրը (15 բառից ոչ ավելի)
- բնագավառը
- մասնագիտական դասիչը
- բնույթը.

տեսական հիմնարար
փորձարարական կիրառական

2. Հուշող (բանալի) բառեր

3. Տեղեկություններ ասպիրանտի վերաբերյալ.

Ա.Ա.Հ. (լրիվ)			
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը			
Հասցեն, հեռախոսը, էլեկտրոնային հասցեն			
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)			
Ասպիրանտուրա ընդունվելու տարեթիվը		Մասնագիտությունը	
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեից նախկինում ստացե՞լ եք դրամաշնորհ		ԱՅո <input type="checkbox"/>	ՈՁ <input type="checkbox"/>
Եթե «Այո», ապա նշեք դրամաշնորհի ծածկագիրը և վերնագիրը			

4. Կազմակերպության

- լրիվ, կրճատ անվանումները և կազմակերպատիրական ձևը (հիմնադրամ, ՊՈԱԿ, ՓԲԸ, ԲԲԸ, ՍՊԸ և այլն)
- գերատեսչական պատկանելությունը
- հասցեն
- հեռախոսը
- էլեկտրոնային հասցեն

5. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ ամիս

6. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը _____ հազար դրամ

7. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ
8. Ասպիրանտի ստորագրությունը
9. Գիտական կազմակերպության ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությունը

«_____» _____ 2018 թ.

Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ*

* Համառոտ, մեկական պարբերությամբ ներկայացնել նախագծի նպատակները՝ հայերեն և անգլերեն

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ *

* Մինչև 10 էջի սահմաններում (ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը) ներկայացնել նախագիծը՝ հայերեն և անգլերեն՝ մեկական տարբերակներով.

- մինչև 8 էջի սահմաններում ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, թեմայի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները,
- մինչև 2 էջի սահմաններում ներկայացնել օգտագործված գրականության ցանկը:

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____

(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

հազար դրամ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկը)			Պահանջվող գումար
ազգանուն անուն հայրանուն	ամսական	ամիսների քանակ	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում			
1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ			
1)			
2)			
...			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ			
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր			
2) տեղական գործուղումների օրապահիկ			
3) տեղական գործուղումների գիշերավարձ			
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր			
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ			
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ			
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			
ՀԱՅՅՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			

Ասպիրանտ՝ _____

(ստորագրություն)

(ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության ղեկավար՝ _____

(ստորագրություն)

(ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____

(ստորագրություն)

(ազգանուն, անուն, հայրանուն)

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ *

* Մեկնաբանել և հիմնավորել ծախսերի նախահաշվի բոլոր կետերը

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՅԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)

(հասցե)

(հեռախոս)

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ ընդունել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2018» մրցույթի մասնակցության «_____» վերնագրով հայտը:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

(_____)
(անուն, ազգանուն)

«___» _____ 2018 թ.

ԱՄՊԻՐԱՆՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԹԵԶԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ա.Ա.Հ. (որիս)	հայերեն	
	անգլերեն	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը		
Հասցեն, հեռախոսը		
Էլեկտրոնային հասցեն		
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)		
Գիտական աստիճանը, կոչումը		
Վերջին թեզի ծածկագիրը, վերնագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը		
Հրատարակված <ul style="list-style-type: none"> - գիտական հոդվածների թիվը - մենագրությունների թիվը 		
Արտոնագրերի թիվը		
Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, փարին, հատորը, էջերը) 1. 2. ...		
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեից և այլ աղբյուրներից ստացված դրամաշնորհները (նշել ծածկագիրը, վերնագիրը) 1. ...		

(ասպիրանտի գիտական թեզի ղեկավարի ստորագրությունը)